

մը եւ կոմսուլթեան մը մայրաքաղաքը. եւ անոր նախ մէկ քա-
ուորդը, և յետոյ ամբողջութեամբ յատկացուեցաւ Ս. Գերեղմա-
նի: Կոտրճրայ արշաւանքի մը ժամանակ հիւանդանալով՝ փո-
խադրուեցաւ Յոպպէ և բնակեցաւ ուխտաւորներու հիւրանոցին
մէջ, բայց այս բնակարանին մէջ հանդիստ չէր, նուահանգիստ
տի ծովային զինուորները այնքան աղմուկ կը հանէին որ՝ Կո-
տրճրայ անհանգիստ մնալով՝ ստիպուեցաւ փոխադրուիլ Երու-
սաղէմ, ուր իսկոյն մեռաւ:

1102ին Պաղտին Ա.ի կինը պաշարուեցաւ Յոպպէի մեջ,
1103 ին, 1106 ին, 1108 ին նոր պաշարումներ տեղի ունեցան,
բայց անոնք վերջան ծովէն եկած օգնութիւններուն շնորհիւ:

Յոպպէն՝ 1187ին Սարակիանոսներէն զրաւուած եւ քան-
դուած ըլլալով՝ 1192ին քրիստոնէից յանձնուեցաւ Սալահէտտինի
եւ Ռիչարդ թագաւորին միջեւ կնքուած զինադադարին զօրու-
թեամբ:

1197ին Հենրիկոս Շանբաների ողբերգական վախճանին շնոր-
հիւ իսլամները դարձեալ զրաւեցին դայն. 1228ին Քրիստոնեա-
ները վերստացան քաղաքը և հոն կառուցին զօրաւոր ամրոց մը:

1251ին Ս. Լուզովիկոս հոն բնակեցաւ թագուհիին հետ, որ
հոն ծնաւ Պլանշ Տը Ֆրանսը, մինչ թագաւորը կ'ըբաղէր 24
աշտարակներով նոր պարիսպներ շինելով:

Այս պարիսպներ չկրցին ազատել քաղաքը. 1268ին Պիպարս
յարձակեցաւ անոր վրայ. կոտորեց բնակիչները, քանդեց շէնքե-
րը, բայց անվնաս թողուց փայտակերտները և մարմարները Գահի-
րէի Հասանիէն թագին Տահէրի մղկիթին զարդարանքին համար:

Յոպպէի ամենագեղեցիկ յիշատակարանաց մէջ նշանաւոր
էր Ս. Պետրոսի հին պաղիլիքան զոր Պաղտին թագաւոր և Էվր-
մար պատրիարքը Ս. Գերեղմանին ընծայեցին: 1268ին իր կար-
գին Ամորի թագաւորը Ս. Նիկողայոսի եկեղեցին ընծայեց Ս.
Գերեղմանին: Վաւերագիրները կը յիշեն նաև Ս. Ստուածածնի
և Ս. Յովնանի եկեղեցիները: Ս. Լուզովիկոս իր ծախքովը գե-
ղեցիկ եկեղեցի մը շինել տուաւ Լատինաց համար:

1600ին հին քաղաքէն միայն երկու աշտարակ մնացած էին
ծովեզերքի բարձրութեանց վրայ:

Ժ.Բ. դարուն Յոպպէի աւերակները Եաֆայի արդի քաղա-
քին շինութեան գործածուած են: